ԶԱՐԴԱՐԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Բ

# ԵՐԳ
# ԱՐԵՒԱԳԱԼԻ ԺԱՄՈՒՆ
ԵՒ
# ԵՐԳ
# ՎԱՍՆ ՀԻՆԳ ԱՒՈՒՐՑՆ
## ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԱՆԿԱՆՑ

Դ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՆԵՐ
Մ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ
1929

ԳԻՆ 5 ՂՐՇ.

# ԵՐԳ ՇԱԲԱԹԱՊԱՀՈՑ

## ՁԿՆԻ ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍԻՆ

Բւ. — Լոյս տուր Տէր աչաց իմոց. զի մի երբէք ննջեցից ի մահ: Մի ասասցէ թշնամին թէ յաղթեցի նմա. կամ նեղիչք իմ ցնծասցեն թէ ես սասանեցայց:

Գւ. — Ի քէն է Տէր աղբիւր կենաց, և լուսով երեսաց քոց տեսանեմք ըզլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո որք ճանաչեն ըզքեզ. զարդարութիւնս քո ոյք ուղիղ են սրտիւք:

Դւ. — Ես ասացի, Տէր ողորմեա՛ ինձ. բժշկեա՛ զանձն իմ եւ մեղայ քեզ: Երանի որ խորհի զաղքատն և ըզտընանկն յաւուր չարի փրկէ ըզնա Տէր:

Եւ. — Ես առ քեզ Տէր աղաղակեցի. առաւօտու աղօթք իմ ժամանեսցեն առ քեզ: Ընդէ՞ր Տէր, մերժես զանձն իմ, կամ դարձուցանես զերեսս քո յինէն:

Ուր. — Մըտցեն աղօթք իմ առաջի քո Տէր. խոնարհեցի ունկըն քո 'ի խնդրուածս իմ: Տէր Աստուած փրկութեան իմոյ ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո:

A 11/56713

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
... ԳՐԱԴԱՐԱՆ

# ԵՐԳ

## Տեառն ՆԵՐՍԻՍԻ վասն երկրորդ աւուր Արարչութեան, եւ վասն Երկնայնոց զօրացն

### ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

*Արարչական բանիւն հրաման*
*Ի յերկրորդումն աւուր ընկզման*
*Ըզջուրսն 'ի ջուրցըն բաժանեաց,*
*Հաստատութեամբ պարունակեաց.*
*Որով զաշխարհս հողեղինաց*
*Անջրպետեաց ի հրեղինաց.*
*Ընդ նոսին որդի՛ք լուսոյ՝*
*Տո՛ւք օրհնութիւն Երրեակ Լուսոյն։*

*Բազմաչեայ հոյլք Քրովբէից՝*
*Երեքարբեանըդ Սրովբէից,*
*Աթոռք անեղ Աստուածութեանըն*
*Համագոյ Երրորդութեան,*
*Բարեխօս լերուք առ Տէր*
*Վասըն մանկանց եկեղեցւոյ. Ընդ.*

*Գերագոյն իշխանութիւնք*
*Եւ անփոփոխ միշտ Տէրութիւնք,*
*Անյաղթելի սուրբ Զօրութիւնք՝*
*Ի յԱրարչին փառաւորութիւն,*

Աղաչեցէ՛ք զՏէրն ողորմած
Անտես չառնել զգործս ձեռաց. Ընդ.

Դասք անմարմնոցըն պետութեանց
Հրեշտակապետըք բարձրութեանց,
Հոգիք հրեղէնք և սպասաւորըք
Հրեշտակաց զինուորութիւնք,
Մաղթեցէ՛ք զՏէրն տէրանց
Վասն մարդկան երկրաւորաց. Ընդ.

Երկնաւորաց դասուց վերնոց՝
Օրհնաբանիչ քոյ զուարթնոց
Քաղցրացի՛ն առ քեզ գըթած
Որ վասն մեր ձայն մաղթանաց,
Զօրս և տացես մեզ պահապան
Յայսմ հետէ մինչ 'ի վախճան. Ընդ.

Զօրութեանց և Տէրութեանց՝
Իշխանութեանց և Պետութեանց,
Եւ ամենայն Անուանելոց
Որք 'ի յերկինս պաղատանօք,
Ընկա՛լ Քրիստոս ուրախութեամբ
Զմեզ յոր մահու և յարութեան.
Ընդ նոսին օրհնել հոգւով
Ըզքեզ ընդ Հօր փառաւորելով։

## ԵՐԵՔՇԱԲԹԻ

Վասն Երրորդ աւուր Արարչութեան, եւ վասն Երրորդի դարուն. եւ ի Յովհաննէս Մկրտիչն

*Էական բանն որ ընդ Հօր*
*Արարչակից և համագոր,*
*Յերրորդ աւուր զջուրսն զատոյց՝*
*Ըզբոյսս և զտունկս բըղխեցոյց,*
*Իսկ 'ի յերրորդ դարուն դարձեալ*
*Զջուրսըն հեղեղ ցամաքեցոյց.*
*Զնոյ տապանաւն խուր ապրեցոյց,*
*Զկենդանեաց սեռս աճեցոյց.*
*Տո՛ւք օրհնութիւն անճառ լուսոյն*
*Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն:*

*Ընդ ծառոց երկրի զգալեաց*
*Տընկեաց և զտունկս յիմանալեաց.*
*Զհեղեղ մեղացն ցածուցեալ,*
*Զգառս արդարոց բազմացուցեալ.*
*Յորոց և մեծն 'ի ծնունդս կանանց*
*Միջնորդ շնորհաց և օրինաց. Տո՛ւք.*

*Թագաւորին երկնից զինուոր՝*
*Արքայութեանն աւետաւոր.*
*Անդրեա՛ դընել ես 'ի սրտի*
*Առ 'ի հովտէս տրտմականէ,*

Յուխտեալ տեղին Տէրունական ,
Ի խոստացեալն որդւոց մարդկան. Տո՛ւք·

Ժառանգին Հօր սպասաւոր ,
Եւ յարգանդէ երկրպագող ,
Կարապետ և Մկրտիչ
Այնմ որ մեղաց մերոց քաւիչ։
Լե՛ր բարեխօս առ նոյն գթած՝
Ջնջել ըզգիր մեր յանցանաց· Տո՛ւք·

Ի Հօրէ լոյս ծագեցար
Մեռեալ բնութեանս կենդանարար ,
Առաքեցեր յառաջընթաց
Սուրբ զՅովհաննէս քարոզ կենաց·
Սորին հայցմամբն Ամենակալ ,
Ըզպաղատանս մեր ընկա՛լ· Տո՛ւք·

Լուսաշաւիղ յերկինս ելին
Հաղանխութեայ սուրբ Հրեշտակին·
Արժանացո՛ ըզմեզ նորին
Նեղ և անցուկ ճանապարհին·
Զի հետեւող գոլով նորին
Հօր քո վերին օթեւանին ,
Եւ երգեսցուք ընդ երջանկացն
Որդւոց լուսոյ քեզ երգ փառաց։

## ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

Վասն Չորրորդի աւուր Արարչութեանն, և վասն Չորրորդի դարուն, և վասն Աւետեաց Աստուածածնին:

Խաւարն անգոյ և սկզբնածին
Հալածեցաւ յօրն առաջին.
Լոյսն այն պայծառ յոր չորրորդին
Յարեգական նիւթ հաւաքեալ.
Լուսինն 'ի տիպ լուսոյ սեղմեալ՝
Եւ աստեղաց պարք յօրինեալ,
Որով օրհնի Ստեղծողն էից
Ի բանաւոր պաշտօնէից:

Ծածկեալ խորհուրդն ծանուցաւ
Չորրորդ դարուն Իսահակաւ.
Ի չորրորդ օր դարձեալ Հրեշտակն
Ետ զաւետիսըն Կուսական.
Թէ լոյսն որ ոչ բովանդակի՝
Ի քէն մարմնով պարունակի.
Յոր օրհնեցայք ազգ երկրածինք
Տո՛ւք օրհնութիւն Պտղոյ կուսին:

Կուսին նախնւոյ մօրն Եւայի
Յամէ Ադամըն հին պարտի.

Բարձան անէծքըն տրտմական
Քո սուրբ ծնընդեամբ կոյս Մարիամ,
Աղաչեա՛ զքո Միածինն՝
Թողուլ զմեղս որդւոց նոցին. Յոր.

Հարսն ընծայեալ յերկրէ յերկինս
Յոր համբառնամք առ քեզ զհոգիս.
Յոր լըսելոյ քո զաւետիս՝
Խնդրեա՛ լինել մեզ լսելիս,
Զձայն աւետեաց քո Միածնին՝
Եթէ՝ Եկա՛յք օրհնեալք Հօր իմ. Յոր.

Զայնիւ առ քեզ Տէ՛ր պաղատիմք
Եւ առաջի քո անկանիմք.
Աղաչանօք Աստուածածնին
Շիջո՛ ի մէնջ զբոց հնոցին.
Տո՛ւր արտասուօք զմեղըս ջնջել
Եւ վերըստին զմեզ նորոգել. Յոր.

Ղեկավար ճարտարապետ,
Անցեր ընդ ծով կենցաղս անհետ.
Վերաբերեա՛ ընդ Պետրոսի
Զմեզ 'ի յալեաց մեղաց ծովէս.
Պաղատանօք գերագունին,
Անապական քում Ծընողին. Յոր.

## ՀԻՆԳՇԱԲԹԻ

Ր Վասն Հինգերորդի Աւուր Արարչութեանն.
եւ վասն Հինգերորդի դարուն, եւ ի սուրբ
Առաքելսն Քրիստոսի

*Ծառագայթեալ Բանն 'ի Հօրէ՝*
*Յոր հինգերորդըն հրամայէ,*
*Բղխեալ ի ջրոց սեռս կայտառաց*
*Եւ թեւաւորս օդականաց.*
*Իսկ ի դարուն հինգ մըկըրտին*
*Յամպն և ի ծովն Իսրայէլ հէն.*
*Տացուք հրաշից ներգործողին*
*Պատիւ և փառս անեղ Բանին:*

*Մաքրապէս օրինակի*
*Առաքելոցըն Քրիստոսի,*
*Որք ի ծովէն Տիբերական*
*Ի յերնայինսըն կոչեցան.*
*Անցին ընդ ծով աշխարհական,*
*Եւ ի Հոգին մըկըրտեցան. Տաց.*

*Յուրախութիւնսն անդըրաւական*
*Ի հարսանիսն անապական՝*
*Զձեզ առաքեաց Հայրն փառաց*
*Հրաւիրատուք արտմականաց.*

*Սուրբ Հարսանեացն այն հայցեցէ՛ք*
*Ընդ ձեզ լինել մեզ պարտակից. Տաց.*

*Նորագողք արեգերաց*
*Ի նախահօրըն յանցանաց,*
*Նորափետուր զարդարեցիք,*
*Զեկեղեցիս հեթանոսաց.*
*Պաղատեցէք առ նոյն գըթած*
*Զմեզ նորոգել ի հնոյ մեղաց. Տաց.*

*Շինող էիցըս համայնից*
*Արարածոց ի յանգոյից՝*
*Նոյն շինեցեր զ՚Եկեղեցի՝*
*Վէմդ ի վերայ վիմին բանի.*
*Ընդ եղեալ հիմունս ի նոր Սիոն*
*Ըզմեզ յօգեա՛ շինմամբ ի նոյն. Տաց.*

*Ուրախացաւ գնացիւք գետոց*
*Քաղաք ի քէն շինեալ Յիսուս,*
*Յորմէ վըտակք շնորհաց հոսեն,*
*Զոգիս մարդկան առոգանեն,*
*Արբո՛ և մեզ ի ջրոյն կենաց*
*Հայցմամբ Հօգւոյն մատրուակաց.*
*Զի բանաւոր երկիրըս Քո*
*Պտղաբերի ի փառըս Քո:*

## ՈՒՐԲԱԹ

Վասն Վեցերորդի աւուր Արարչութեան, եւ վասն Վեցերորդի դարուն եւ ի խաչելութեանն Քրիստոսի :

*Զընանդուրժեալ բնութեամբ Բարւոյն*
*Ունել միայն զանճառ բարին,*
*Այլ ստեղծեալ մարդ յիւր պատկերին*
*Ի վեցերորդն առաւօտին,*
*Եւ ի յերրորդ ժամ զկազմածինն*
*Ի յօգնութիւն եւ Հազածնին,*
*Զորս ի Դրախտին եդ վայելել,*
*Բայց ի պըտղոյն մահու արգել:*

*Պապանձեալ տա զատողին՝*
*Յետ յանցանաց Ադամըն հին,*
*Զկինըն պատճառ եդեալ խաբման,*
*Եւ Կինըն զօձըն զաւաճան.*
*Որով երկիրս այս անիծաւ,*
*Փուշ և տատասկ ի սմա բուսաւ,*
*Վըճիռ մահու մարդոյն տըւաւ*
*Դառնալ ի հող ուստի ստեղծաւ:*

*Զընջել փութայր Հայրըն փառաց*
*Ըզգիր պարտեաց մեր յանցանաց.*
*Որով զգեցաւ Որդին զըթած*
*Ի վեց դարուն զմարմին մեղաց.*
*Հօր հաճութեամբ ի մահ խաչին*
*Եկըն կամաւ ի յՈւրբաթին:*

Գառըն զենու ի հին զատկին
Փոխան գառանցն օրինակին:

Ռահիւ լուսոյ պատուիրանին
Արդարութեան ճանապարհին,
Բարձրանալով քո ի Խաչին
Բարձրացուցեր զմեզ ի յերկինս.
Քո անպատում խոնարհութեամբդ,
Եւ կամաւոր Խաչելութեամբդ,
Հաշտեա՛ց ընդ մեզ, Տէր, գթութեամբ,
Եւ թո՛ղ զմեղս ողորմութեամբ:

Սոսկալից Սերովբէից
Եւ ահաւորըդ Քերովբէից.
Խոնարհեցար ի չարչարանս
Չարչարելի բնութեամբ մարդկան.
Ի Խաչին զմեղս բառաներ
Եւ զդատակնիք մահու լուծեր.
Հաշտեա՛ց ընդ մեզ, Տէ՛ր գթութեամբ
Եւ թո՛ղ զմեղս ողորմութեամբ:

Վեհագոյն բնութեանց էից
Եւ արարիչըդ բոլորից.
Յորժամ ծագես զԽաչիդ նշան
Ի գալըստեան քո միւսանգամ.
Զերկրպագուս այժմ հաւատով
Լուսաւորեա՛ նորին լուսով.
Զի համաձայն խաչազգեցիցն
Ընգեղ օրհնեմք յաւիտենից:

# ԵՐԳ ԱՐԵՒԱԳԱԼԻՆ

Յարեւելից մինչ 'ի մուտս. ի հիւսիսո՛յ և հարաւոյ. ամենայն ազգ և ազինք, 'ի յօրհնութիւն նոր օրհնեցէք զարարիչն արարածոց. որ ծագեա՛ց զլոյս արեգականն այսօր յաշխարհս:

Եկեղեցի՛ք արդարոց. փառաբանիչք ամենասուրբ Երրորդութեանն. յառաւօտս լուսոյ զառաւօտ խաղաղութեան Քրիստոս. գովեցէ՛ք ընդ Հօր և Հոգւոյն. որ ծագեա՛ց ըզլոյս փրկութեանն իւրոյ ի մեզ:

ՅՈՐԴՈՐԱԿ

Յարեւելից յարեւմուտս մանկունք Սիոնի, օրհնեցէք միշտ անզադար զծագողն լուսոյ:

Եկեղեցիք արդարոց և փառաբանիչք. բարեբանեցէք որ ետ զիմաստս լուսոյ:

ՔԱՐՈԶ

ԱՂՕԹՔ

ՍԱՂՄՈՍ Դ.Թ.

ԵՐԳ

Ձգնաւո՛րք Աստուծոյ, և ժառանգորդք երկնից արքայութեանն, ո՛րք փոխանակեայք զանցաւորս առիք զանանցըն բարութիւնն. բարեխօսեցէք առ Տէր, վասն մանկանց եկեղեցւոյ:

Նահատա՛կք պանծալիք, և սիրեցեալք ի յերկնաւոր հօրէն. ո՛րք մկրտեցայք ընդ Քրիստոսի արեամբ ձերով ի մահ խաչին. բարեխօսեցէք առ Տէր վասն մանկանց Եկեղեցւոյ:

Մարտիրո՛սք ցանկալիք, և օթևանք Հոգւոյն ճշմարտութեան. ո՛րք յաղթեցիք հոգւով կարեաց և ցանկութեան. բարեխ.

Գովելի՛ք աշխարհի, և բաղձալիք վերնոցըն պետութեանց. ո՛րք երանութեան մասին հասիք քան զամենայն որդիս մարդկան. բարեխ.

Կամաւոր պատարագք, մանկունք տիօք և կատարեալք իմաստութեամբ. ո՛րք փոխանակ կաթին արբիք զգինին զմայլեցուցիչ. բարեխ.

### ՅՈՐԴՈՐԱԿ

Ճգնաւորըք ճշմարիտք վկայք Քրիստոսի. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակըք կենդանիք, սիրողք Քրիստոսի. որք չարչարեցայք մարմնով վասն անուանըն Տեառն:

Մարտիրոսըք ցանկալիք մարդկան բղձալիք. հայցեցէք ի Սուրբ Հոգւոյն տալ մեզ զբարիս:

Գովելիք վերնոց դասուց. պարծանք աշխարհի. խնդրեցէք զխաղաղութիւն տալ Եկեղեցւոյ:

կամաւոր սուրբ պատարագք, հասակաւ մանկունք. հայցեցէք լինել և մեզ ձեզ պսակակից։

**ՄԱՂԹԱՆՔ**

**ՔԱՐՈԶ**

**ԱՂՕԹՔ**

**ՍԱՂՄՈՍ ՆԹ.**

## ԵՐԳ

Լո՛յս, արարիչ լուսոյ առաջին լոյս, բնակեալդ 'ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր. 'ի դասուց լուսեղինացն օրհնեալ. 'ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի։

Լո՛յս, 'ի լուսոյ ծագումն արեգակն արդար. անճառ ծնունդ Հօր՝ Որդի. յառաջ քան զարեւանուն քո գովեալ ընդ Հօր. ի ծագել լու.

Լո՛յս, 'ի Հօրէ բղխումն աղբիւր բարութեան, Հոգիդ Սուրբ Աստուծոյ. մանկունք եկեղեցւոյ ընդ հրեշտակս զքեզ բարեբանեն. ի ծագել լու.

Լո՛յս, երրեակ և մի անբաժանելի Սուրբ Երրորդութիւն. զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք. ի ծագել լու.

## ՅՈՐԴՈՐԱԿ

Անեղանելի Աստուած Հայր ամենակալ, ընկալ զաղաչանս մեր քոց պաշտօնէից։

Ի Հօրէ ծագումն անճառ, արեգակն ա[illegible]դար. ծագեա՛ 'ի յանձինս մեր զլոյսդ ապ[illegible]ութեան։

A 11
59755



Ի Հօրէ բղխեալ Հոգի, աղբիւր բարութեան. յուսով քով լըցո՛ ըզմեզ յայսմ առաւօտուս:

Երեք անձինք և մի բնութիւն, մի Աստուածութիւն. զքեզ խոստովանիմք յաւէտ Սուրբ Երրորդութիւն:

ՄԱՂԹԱՆՔ

ՔԱՐՈԶ

ԱՂՕԹՔ

ՍԱՂՄՈՍ ԻԲ.

ԵՐԳ

Ճանապա՛րհ, և ճշմարտութիւն, և կեանք Քրիստոս. առաջնորդեա՛ հոգւոց մերոց. յերկրէ երանից յերկինս:

Դուռն կենաց մրտից Յիսուս. մո՛յծ և զմեզ առ Հայր քո և Հոգի, երգել միշտ բղխտօս:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճանապա՛րհ, բարի Քրիստոս և ճշմարտութիւն, առաջնորդ հոգւոց մերոց յերկրէ 'ի յերկինս:

Դուռն կենաց մրտից Յիսուս. Աստուած ճշմարիտ. մո՛յծ և զմեզ առ Հայրըդ քո. հոգւովդ սրբով:

ՄԱՂԹԱՆՔ

ՔԱՐՈԶ

ԱՂՕԹՔ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220059755